ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԸ

15.04.2014 17:05

Այսօր՝ ապրիլի 15-ին, տեղի է ունեցել ՀՀ փաստաբանական դպրոց հիմնադրամի կառավարման խորհրդի նիստը, որը նախագահել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը:

Ըստ Փաստաբանական դպրոցի կանոնադրության նիստին մասնակցել են վեց անդամից բաղկացած խորհրդի 5 (հինգ) անդամները՝ Արա Զոհրաբյանը (խորհրդի նախագահ), Լյուդվիգ Դավթյանը, Լեռնիկ Հովհաննիսյանը, Նիկոլայ Հակոբյանը և Հերիքնազ Տիգրանյանը:

Նիստի ընթացքում քննարկվել է Փաստաբանական դպրոցի տնօրեն Նիկոլայ Բաղդասարյանի լիազորությունները դադարեցնելու և նոր տնօրեն նշանակելու հարցերը:

Նիկոլայ Բաղդասարյանը պնդել է իր հրաժարականի դիմումը և հայտնել, որ այլ գործերով անձնական ծանրաբեռնվածության պատճառով է ցանկանում ազատվել դպրոցի տնօրենի պաշտոնից: Նիկոլայ Բաղդասարյանը շնորհակալություն է հայտնել դպրոցի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանին և խորհրդի անդամներին՝ համատեղ աշխատելու համար:

Արա Զոհրաբյանը առաջարկել է Դպրոցի նոր տնօրեն նշանակել Փաստաբանների պալատի խորհրդի անդամ, փաստաբան Սիմոն Բաբայանին, ով հանդիսանում է իրավաբանական գիտությունների թեկնածու և ունի ուսումնական գործընթաց ղեկավարելու հարուստ փորձ:

Դպրոցի խորհրդի նախագահն առաջարկել է Դպրոցի երկու ծրագրերի պատասխանատու սահմանել Նիկոլայ Բաղդասարյանին, նկատի ունենալով այն, որ այդպիսի ցանկություն է հայտնել նա և այդ ծրագրերից տեղյակ լինելով կարող է ծրագրերը հասցնել իրենց ավարտին:

Նիկոլայ Բաղդասարյանն իր հերթին հայտնել է, որ Սիմոն Բաբայանը առավել որակով է կազմակերպելու փաստաբանական դպրոցի ուսումնական գործընթացը, քանի որ ունի փորձ մանկավարժական ոլորտում:

Արա Զոհրաբյանը շնորհակալություն է հայտնել Նիկոլայ Բաղդասարյանին վերջին երկու տարիներին կատարած արդյունավետ աշխատանքի համար և հարցերը ներկայացրել է քվեարկության:

ՀՀ փաստաբանական դպրոցի խորհուրդը միաձայն որոշել է «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի տնօրեն Նիկոլայ Բաղդասարյանի դիմումը բավարարել և դադարեցնել Նիկոլայ Բաղդասարյանի

լիազորությունները' լուծելով նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը և 2014 թվականի ապրիլի 16-ից «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի տնօրեն նշանակել Սիմոն Ալբերտի Բաբայանին:
Քվեարկությունից հետո Սիմոն Բաբայանը շնորհակալություն է հայտնել խորհրդից վստահության և պատասխանատու պաշտոնում նշանակելու համար:
Խորհրդի նիստից հետո Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը Դպրոցի աշխատակազմին է ներկայացրել նոր տնօրենին:

***

Սիմոն Ալբերտի Բաբայան
Ազգությունը'

Ծննդյան տարեթիվ

Ընտանեկան դրությունը

Հայ

01.05.1979թ.

Ամուսնացած, մեկ երեխա

Աշխատանքային փորձ '
2011 – Կորպորատիո կառավարման բարձրագույն դպրոց
• Դասախոս (գործարարական իրավունք):
2010 – Եվրախորհուրդ հայաստանյան գրասենյակ
• ՀՀ փաստաբանների դպրոցի ստեղծման գործընթացի կազմակերպման փորձագետ:

2010 – «Ինթրավիրես» ՓԲԸ հիմնադիր
• Հիմնադիր, Իրավաբանական բաժնի ղեկավար,

2008 – ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա գիտակրթական միջազգային կենտրոն
• Իրավագիտության ամբիոնի վարիչ, դեկան

2008 ՀՀ Եվրոպական տարածաշրջանային ակադեմիա
• Իրավագիտության ֆակուլտետի դեկան

2007- ՀՀ փաստաբանների պալատ
• ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ (2008-ից)
• Փաստաբան

2006- ՀՀ Ազգային պատկերասրահ
• իրավահորհրդատու

2002-2008 Երևանի տնտեսաիրավագիտական համալսարան
• Ուսումնական գծով պրոռեկտոր

2001-2002 Երևանի տնտեսաիրավագիտական համալսարան
• Իրավագիտության ամբիոնի դասախոս (քաղաքացիական իրավունք)

Կրթությունը՝

2004-2006 Միջազգային տեղեկատվայնացման, գործարարության և իրավունքի ակադեմիա:
 Հայցորդ, Իրավաբանականն գիտությունների թեկնածու:

1995-2000 Երևանի տնտեսաիրավագիտական համալսարան իրավագիտության ֆակուլտետ
 Դիպլոմավորված մասնագետ՝ <> մասնագիտացմամբ

Գիտաժողովներ,
գործուղումներ

Լեզուների իմացություն՝
2009 թ. Բոլոնիայի գործընթացի տեղայնացման հետ կապված փորձի փոխանակում, Եվրոպական կենտրոնական համալսարան (CEU), Բուդապեշտ, Հունգարիա

2009թ. ‘ Բոլոնիայի գործընթացը, կրթության կառավարման Ֆրանսիայի փորձը’ ծրագրի շրջանակներում փորձի փոխանակում Փարիզ, Ֆրանսիա:

2010թ. ‘Փաստաբանական գործունեությունը Չեխիայում’ ծրագրի շրջանակներում փորձի փոխանակում Պրահա, Բռնո:

2011թ. Կրթական գործունեության կազմակերպման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ Ի. Ճավճավաձեի անվան համալսարանում, Թբիլիսի, Վրաստան, TEMPUS ծրագրի շրջանակներում

2011թ. Բոլոնյան գործընթացին համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպում և դրա առանձնահատկությունները» փորձի ուսումնասիրում, ի Սամարղանդ, Տաշկենտ Ուզբեկստան:

2013թ. Կրթության որակի ապահովման բնագավառում փորձի փոխանակում Լյովենի կաթոլիկ համալսարան Լյովեն Բելգիա:

Ռուսերեն (գերազանց)
Անգլերեն

1998-2000 զինվորական ծառայություն ՀՀ Զինված ուժերում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 2){ updateCommentsCount(window.location.href); } })